# ՀԵՏԱԳԱ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՋՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ









**Հայաստանում ՋՌՀԿ ոլորտում ազգային քաղաքականության երկխոսության ղեկավար հանձնախմբի 19րդ հանդիպում**


**Արտյոմ Մխիթարյան**

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության լիցենզիաների, թույլտվությունների և համաձայնեցումների վարչության պետի ժ/պ


27 մայիսի, 2021 թ.
Երևան

# Ջրավազանային կառավարման պլանների մշակման առաջընթացը

- Կառավարության կողմից ընդունվել են.
  - Արարատյան ՋԿՊ (2016 թ.)
  - Հարավային ՋԿՊ (2017 թ.)
  - Ախուրյանի ՋԿՊ (2018 թ.)
- Մշակվել են նախագծեր.
  - Հրազդանի ՋԿՊ (2021 թ.)
  - Սևանի ՋԿՊ (2021 թ.)
- Ենթակա է մշակման.
  - Հյուսիսային ՋԿՊ



# Ջրավազանային կառավարման պլանների մշակման ժամանակացույցը

- Արարատյան ՋԿՊ
  - Պլանի ժամանակահատված - 2016-2021 թթ.
  - Անհրաժեշտ է մշակել պլան՝ հաջորդ 6-ամյա ցիկլի համար
- Հարավային ՋԿՊ
  - Պլանի ժամանակահատված - 2016-2021 թթ.
  - Անհրաժեշտ է մշակել պլան՝ հաջորդ 6-ամյա ցիկլի համար
- Ախուրյանի ՋԿՊ
  - Պլանի ժամանակահատված - 2017-2022 թթ.
  - Անհրաժեշտ է մշակել պլան՝ հաջորդ 6-ամյա ցիկլի համար

# Ջրավազանային կառավարման պլանների մշակման ժամանակացույցը

- Հրազդանի ՋԿՊ
  - Պլանի ժամանակահատված - 2022-2027 թթ.
- Սևանի ՋԿՊ
  - Պլանի ժամանակահատված - 2022-2027 թթ.
- Հյուսիսային ՋԿՊ
  - Անհրաժեշտ է մշակել պլան 6-ամյա ցիկլը համար և պաշտոնապես ընդունել մինչև ամենաուշը 2026 թ.՝ հաշվի առնելով Համապարփան և ընդլայնված գործընկերության համաձայնգարով (ՀԸԳՀ) Հայաստանի ստանձնած պարտավորությունները

# Հետագա գերակայությունները

- Ակնկալում ենք ԵՄ աջակցությունը հետևյալ ուղղություններով.
  - Ջրային ոլորտի օրենսդրության շարունակական բարելավում,
  - ՋՌՀԿ ոլորտում ազգային քաղաքականության երկխոսության պլատֆորմի շարունակություն,
  - Ջրավազանային տարածքային կառավարման բաժինների կարողությունների զարգացում և հզորացում,
  - Ջրային պետական կադաստրի հզորացում և տվյալների փոխանակման մեխանիզմների բարելավում,
  - ՋՇԴ սկզբունքներին համահունչ մակերևութային և ստորերկրյա ջրերի մոնիթորինգի ներդրում և համակարգի տեխնիկական արդիականացում,
  - ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 2020 թ. հուլիսի 10-ի «ՀԸԳՀ համաձայնագրի կիրարկման ճանապարհային քարտեզի ջրի որակի և պաշարների կառավարմանն ուղղված ոլորտի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» 224-Լ հրամանով նախանշվող միջոցառումների իրականացում

# Հետագա զերակայությունները

- Ջրավազանային կառավարման պլանների միջոցառումների իրականացման խնդիրներ
  - Ամենամեծ ծախսը՝ կեղտաջրերի մաքրման կայանների կառուցումը
  - Կորոնավիրուսով և առկա հետպատերազմյան սոցիալ-տնտեսական իրավիճակով պայմանավորված՝ առաջիկա տարիներին ջրային ոլորտի ֆինանսավորման էական աճ չի նախատեսվում
  - Խնդրահարույց կլինի ենթակառուցվածքների բարելավման ֆինանսավորումը (խմելու ջրամատակարարում և ջրահեռացում, ոռոգման համակարգ)
- Ֆինանսական միջոցների կառավարման արդյունավետության բարելավում, նորարարական մոտեցումների կիրառում, միջազգային ֆինանսական հաստատությունների հետ կապի ապահովում՝ ապահովելու ենթակառուցվածքների բարելավման ֆինանսավորումը

# Շնորհակալություն ուշադրության համար



